ՊԱՐՈՒՅՐ ՄԱՄԲՐԵԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հայագիտությունը ծանր կորուստ կրեց:

Երկարատև հիվանդությունից հետո, կյանքի 79-րդ տարում վախճանվեց ականավոր հայագետ-աղբյուրագետ, կովկասագետ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գլխավոր մասնագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պարույր Մամբրեի Մուրադյանը:

Պ. Մուրադյանը ծնվել է 1933 թ. մարտի 25-ին Ջավախքի Ղադո (հայ.՝ Փապար) գյուղում: 1952 թ. ավարտել է Ազավրեթի միջնակարգ դպրոցը: 1953-1958 թթ. ընդունվել և ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի արևելյան (պարսկական) բաժինը: 1960-1962 թթ. սովորել է Հայաստանի ԳԱ ասպիրանտուրայում՝ ուսումնառությունն անցկացնելով Թբիլիսիի պետական համալսարանում: 1963 թ. պաշտպա-նել է թեկնածուական ատենախոսություն «Հայ-վրացական մատենագրական փոխհարաբերությունները 18-րդ դարում» թեմայով: 1963-1970 թթ. աշխատել է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հին գրականության բաժնում: 1970 թ. աշխատել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, իսկ 1976 թվականից՝ նաև ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում, որտեղ կազմավորել և գլխավորել է Կովկասագիտության և բյուզանդագիտության բաժինը: 1986 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Վրաստանի հայերեն արձանագրությունները. Քարթլի և Կախեթ» թեմայով: 1989 թ. ստացել է պրոֆեսորի կոչում, դարձել է Մեսրոպ Մաշտոցի մրցանակի դափնեկիր: 1991/1992 ուսումնական տարում կովկասագիտության դասընթաց է վարել Գերմանիայում (Տրիրի համալսարան): 2002-2003 թթ. դասավանդել է Հ. Աճառյանի անվան համալսարանում: Պ. Մուրադյանը, երկար տարիներ դասավանդելով Երևանի պետական համալսարանում, աճեցրել է բազմաթիվ երիտասարդ մասնագետներ:

Նշանակալի է պրոֆ. Պարույր Մուրադյանի վաստակը հայոց միջնադարյան մատենագրության, մշակույթի, ճարտարապետության, պատմական սկզբնաղբյուրների ու վիմագրական հուշարձանների հիմնարար հետազոտությունների բնագավառում:

Հայագիտության համար խոշոր երևույթ էր Պ. Մուրադյանի կողմից «Վրաց ժամանակագրության»՝ հին վրացերենից հայերենի ամբողջական թարգմանությունն ու հրատարակումը:

Մնայուն և գիտական մեծարժեք հետազոտություններ են “Armeno-Georgica” մատենաշարով հրապարակված՝ Պ. Մուրադյանի մենագրությունները՝ «Հայաստանի վրացերեն արձանագրությունները», «Վրաստանի հայերեն արձանագրությունները» (2 հատոր), «Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները», «Շուշանիկի վկայաբանության» հայերեն և վրացերեն խմբագրությունները:

Պ. Մուրադյանը թողել է գիտական հսկայական ժառանգություն՝ ավելի քան 300 տպագիր աշխատություն:

Նրա ուսումնասիրություններին հատուկ են գիտական հիմնավորվածությունը, առաջադրվող եզրակացությունների թարմությունն ու համարձակությունը, գիտական նորույթը: Պրոֆ. Պ. Մուրադյանի գիտական գործունեությունը բնութագրվում է գիտական հետևողականությամբ և ուսումնասիրության խնդիրների լայն շրջանակի ընդգրկմամբ: Նա ծավալել է գիտակազմակերպչական ակտիվ գործունեություն, մեծ վաստակ ունի ինչպես հայագիտական նոր ուսումնասիրությունների ծրագրման, նոր կադրերի պատրաստման, այնպես էլ անվանի հայագետ գիտնականների վաստակի գնահատման ու նորովի ներկայացման, հայագիտական նոր հրապարակումների ու շարքերի ստեղծման ու խմբագրման ասպարեզներում:

Նա կազմել ու խմբագրել է «Կովկաս և Բյուզանդիա», «Հայագիտական հետազոտություններ», «Հայագիտական մատենադարան», «Հուշարձան» մատենաշարերը, խմբագրել է շատ հայագետների մենագրություններ, կազմել և հրատարակել է անվանի հայագետների գիտական ժառանգությունը ամփոփող ժողովածուներ (Ն. Մառ, Հ. Օրբելի, Լ. Խաչիկյան, Լ. Մելիքսեթ-Բեկ, Ե. Տեր-Մինասյան, Մ. Ներսիսյան և այլք):

Պրոֆ. Պ. Մուրադյանը եղել է գիտական, գիտամեթոդական ու խմբագրական մի շարք խորհուրդների անդամ: Գիտական զեկուցումներով մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների ու կոնգրեսների ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանյան շատ երկրներում, Հայաստանում կազմակերպել է «Քրիստոնյա Արևելք» միջազգային գիտաժողովը և հրատարակել նրա նյութերը:

Պ. Մուրադյանը բազմիցս արձագանքել է նաև պատմության կեղծարարություններին և պարբերական մամուլի ու գիտական հանդեսների էջերում հանդես է եկել սուր գրախոսականներով:

Պարույր Մուրադյանը պատմաբանասիրական լայն ընդգրկում ունեցող գիտնական էր, որը խոր հետք է թողել Հայաստանում կովկասագիտության ձևավորման ու զարգացման բնագավառում:

Նա դեռևս շատ անելիքներ և մեծ ծրագրեր ուներ իրականացնելու:

Պարույր Մուրադյանի՝ անխոնջ գիտնականի և բարի մարդու հիշատակը թանկ ու անմոռաց է հայագետների, բազմաթիվ գործընկերների, աշակերտների, ինչպես նաև Հայաստանի մտավորականության համար:

ՀՀ ԳԱԱ նախագահություն

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ
ԵՊՀ պատմության ֆակուլտետ